



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 87 -Ն «03» հունիսի 2023 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 3-ՐԴ, 6-ՐԴ, 8-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

- Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատություններում «Երաժշտություն» առարկայի 3-րդ, 6-րդ, 8-րդ և 11-րդ դասարանների առարկայական ծրագրերը՝ համաձայն հավելվածի:
- Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ՝

Ժ. ԱՆԴՐԵԱՅԱՆ

7/3/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169



Հավելված

«Կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

2023 թվականի հուլիսի 3-ի

N 87 -Ն հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 3-ՐԴ, 6-ՐԴ, 8-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

3-րդ դասարան

Թեմա 1	Ինչի մասին է պատմում երաժշտությունը. արտահայտչական և նկարագրական ինտոնացիաներ
<p>Նպատակներ</p> <ol style="list-style-type: none">1) Ձևավորել պատկերացումներ ինտոնացիայի (հնչերանգի) մասին:2) Ձևավորել պատկերացումներ և գիտելիքներ արտահայտչական և նկարագրական ինտոնացիաների մասին:3) Ձևավորել արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները ճանաչելու և ներկայացնելու կարողություններ:4) Զարգացնել երաժշտությունից ստացած տպավորությունները տարբեր ձևերով ներկայացնելու կարողություն:5) Արժևորել երաժշտության և կյանքի կապը:	<p>Ուղղորդող հարցեր</p> <ol style="list-style-type: none">1) Ինչի՞ մասին է պատմում երաժշտությունը:2) Ի՞նչ միջոցներով է արտահայտում և նկարագրում երաժշտությունը:

Վերջնարդյունքներ

- 1) **Տարբերի և ցույց տա** արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները:
- 2) **Չաղորդակցվի և ինքնարտահայտվի** արտահայտչական և նկարագրական ինտոնացիաների միջոցով:
- 3) **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» և ռիթմական նվագարաններով:
- 4) Տրված քառատողով **հորինի** ռիթմական պատկեր և մեղեդի:
- 5) **Երգի** (մենակ կամ խմբով) ժողովրդական և կոմպոզիտորական երգեր ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ:
- 6) **Նկարագրի** ստեղծագործությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով:
- 7) **Չամենատի և բացատրի** հակադիր բնույթի ստեղծագործությունները:
- 8) **Արժևորի** կյանքի ու երաժշտության կապը:

Թեմայի բովանդակություն

1) Բազմաբնույթ երգեր և ունկնդրվող ստեղծագործություններ՝ արտահայտչական և նկարագրական ինտոնացիաներով, ստեղծագործություններ, որոնք նկարագրում են բնության պատկերներ, երևույթներ, և ստեղծագործություններ, որոնք արտահայտում են մարդկային զգացողություններ, տրամադրություն և այլն:

Առաջարկվող գործունեության ձևեր

- 1) Ունկնդրել բազմաբնույթ երաժշտական ստեղծագործություններ, մեկնաբանել դրանց բնույթն ու իմաստը:
- 2) Երգել բազմաբնույթ ստեղծագործություններ և մեկնաբանել դրանց բնույթը:
- 3) Կատարումներն ուղեկցել երաժշտառիթմական և պարային շարժումներով, հիմնավորել դրանք:
- 4) Ստեղծել փոքրիկ ինպրովիզացիաներ արտահայտչական և նկարագրական ինտոնացիաներով:

Խաչվող հասկացություններ

Անհատներ և հարաբերություններ

Չաղորդակցվելով երաժշտական ստեղծագործություններին՝ սովորողը հասկանում է, թե ո՞վ է ինքը, ինչ է իր համար երաժշտությունը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է ինքնարտահայտվել երաժշտության միջոցով: Արժևորում է երաժշտության և կյանքի կապը, հասկանում է, որ երաժշտությունը կարող է նկարագրել բնության պատկերներ և երևույթներ, արտահայտել մարդկային հույզեր ու զգացմունքներ:

Միջառարկայական (միջբնագավառային) կապեր

Մայրենի - ներկայացնել հեքիաթի կամ պատմվածքի նկարագրական կամ արտահայտչական մասերը:

Կերպարվեստ - ներկայացնել կերպարվեստի նկարագրող և կամ արտահայտող ժանրերը (բնանկարներ, նատյուրմորտներ, դիմանկարներ):

Կապը հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող արդյունքների հետ
S1, S7, S8, S22, S24, S26, S27, S28, S30

Թեմա 2	Ինչն է միավորում խոսքն ու երաժշտությունը. խոսակցական և երաժշտական ինտոնացիաներ	
Նպատակներ 1) Ձևավորել պատկերացումներ երաժշտական խոսքի վերաբերյալ: 2) Ձևավորել գիտելիքներ երաժշտական խոսքի տարրերի մասին: 3) Ձևավորել երաժշտական և գրական խոսքի տարրերը համեմատելու կարողություն: 4) Չարգացնել երգեցողության կարողություններ: 5) Խթանել հետաքրքրություն կենդանի կատարումների, համերգասրահների ու թանգարանների գործունեության վերաբերյալ:	Ուղղորդող հարցեր 1) Ի՞նչ է նշանակում «երաժշտական խոսք»: 2) Կարո՞ղ է խոսքը երաժշտական լինել:	
Վերջնարդյունքներ 1) Հաղորդակցվի և ինքնարտահայտվի խոսակցական և երաժշտական ինտոնացիաների միջոցով և ճանաչի դրանք: 2) Համեմատի գրական և երաժշտական խոսքը: 3) Ստեղծի խաղային և հեքիաթային կերպարներ արտահայտիչ երգեցողության միջոցով, շնչառությունը համապատասխանեցնելով երաժշտական ֆրազներին: 4) Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» և ռիթմական նվագարաններով: 5) Ձեռքի նշաններով կատարի երկձայն երգեր: 6) Նկարագրի ստեղծագործությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ: 7) Դրսևորի հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ:		
Թեմայի բովանդակություն 1) Տարբեր բնույթի երգեր, երաժշտական ստեղծագործություններ: 2) Երաժշտական և գրական խոսք:	Առաջարկվող գործունեության ձևեր 1) Ունկնդրել և կատարել տարբեր բնույթի երգեր և երաժշտական ստեղծագործություններ: 2) Որոշել երաժշտական խոսքի տարրերը. մոտիվ, ֆրագ, նախադասություն, պարբերություն: 3) Որոշել երաժշտական ֆրազները լսողությամբ և նոտաներով, երգերի կատարման ընթացքում շնչառությունը համապատասխանեցնել ֆրազներին:	Խաչվող հասկացություններ Օրինաչափություններ Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտման շնորհիվ: Օրինակ՝ սովորողները հասկանում են, որ խոսակցական և երաժշտական լեզուների զարգացման օրինաչափությունները նման են իրար: Նրանք համեմատում են գրական և երաժշտական խոսքերը, ցույց են տալիս ընդհանրությունները՝ ռիթմը, շեշտը, մոտիվը,

	4) Համեմատել երաժշտական և գրական խոսքը, դրանց տարրերը, նշել ընդհանրությունները և առանձնահատկությունները:	Ֆրագը, Նախադասությունը, պարբերությունը, առոգանությունը և արտահայտչամիջոցների առանձնահատկությունները:
Միջառարկայական (միջբնագավառային) կապեր		
Մայրենի - բացատրել գրական խոսքի և երաժշտական խոսքի ընդհանրությունները և առանձնահատկությունները:		
Կապը ՀԴԶ-ի վերջնարդյունքների հետ S1, S7, S8, S22, S23, S24, S27, S28, S30		

Թեմա 3	Մանկական օպերաներ Ենթաթեմա 1. Սիմֆոնիկ նվագախումբ և նվագարաններ
Նպատակներ <ol style="list-style-type: none"> 1) Ծանոթացնել մանկական օպերաներին, ուսուցանել հատվածներ: 2) Չարգացնել դրանք կատարելու և ներկայացնելու կարողություններ: 3) Ձևավորել պատկերացումներ և գիտելիքներ սիմֆոնիկ նվագարանների և նվագախմբի մասին: 4) Ձևավորել պատկերացումներ և գիտելիքներ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի ու աշխարհի հանրահայտ օպերային թատրոնների(առցանց) մասին: 5) Ձևավորել կարողություններ թատրոններում պատշաճ վարքագիծ և պահվածք դրսևորելու համար: 6) Նպաստել կենդանի կատարումների նկատմամբ հետաքրքրությունների դրսևորմանը: 7) Արժևորել օպերային արվեստը: 	Ուղղորդող հարցեր Ի՞նչ է նշանակում մանկական օպերան: Ի՞նչ տրամադրություն է հաղորդում մանկական օպերան: Ի՞նչ է թատրոնը: Թատրոնի ի՞նչ տեսակներ գիտես: Ինչպե՞ս պիտի քեզ պահես թատրոնում:
Վերջնարդյունքներ <ol style="list-style-type: none"> 1) Բեմականացնի և ստեղծի հեքիաթային կերպարներ մանկական օպերաներից արտահայտիչ երգեցողության և դերասանական հնարների միջոցով: 2) Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» և ռիթմական նվագարաններով: 	

- 3) **Երգի** (մենակ կամ խմբով) հատվածներ մանկական օպերաներից ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, հետևելով խմբավարի շարժումներին:
- 4) **Նկարագրի** ստեղծագործությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով,
- 5) **Բացատրի** ստեղծագործության բովանդակությունը, ցուցաբերի հուզական արձագանք, **մեկնաբանի** սեփական զգացողությունները:
- 6) **Տարբերի** հնչողությամբ սիմֆոնիկ նվագախմբի նվագարանների խումբը:
- 7) **Համեմատի** հակադիր բնույթի ստեղծագործությունները:
- 8) **Դրսևորի** հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ:
- 9) **Արժևորի** օպերային արվեստը և դրսևորի պատշաճ վերաբերմունք:

<p>Թեմայի բովանդակությունը</p> <ol style="list-style-type: none"> 1) Հայկական և այլ ազգերի մանկական օպերաներ: 2) Աշխարհի հանրահայտ օպերային թատրոններ: 3) Սիմֆոնիկ նվագարաններ և նվագախմբեր: 	<p>Առաջարկվող գործունեության ձևեր</p> <ol style="list-style-type: none"> 1) Ունկնդրել (նաև դիտել տեսագրություններ) և արտահայտիչ կատարել մանկական օպերաների հատվածներ: 2) Բնութագրել, մեկնաբանել երաժշտությունը և կատարել համապատասխան երաժշտա-ռիթմական կամ պարային շարժումներ: 3) Ծանոթացնել սիմֆոնիկ նվագարաններին և նվագախմբերին: 4) Բեմադրել հատվածներ մանկական օպերաներից: 5) Չարգացնել երաժշտական ստեղծագործության նկատմամբ հետաքրքրություն և հուզական արձագանք: 6) Նկարել կամ ներկայացնել տպավորությունները փոքրիկ պատմվածով: 7) Այցելել օպերային թատրոն: 	<p>Խաչվող հասկացություններ Անհատական և մշակութային արժեհամակարգ</p> <p>Հաղորդակցվելով մանկական օպերաներին՝ սովորողը դրսևորում է ստեղծագործական մոտեցումներ, ինչպես նաև երևակայություն, որով ներկայացնում է տվյալ երաժշտական կերպարը իր պատկերացումներով:</p>
<p>Միջառարակայական կապեր</p> <p>Մայրենի - ներկայացնել մանկական օպերաների լիբրետտոները:</p> <p>Թատրոն - Բեմադրել մանկական օպերաների հատվածներ:</p> <p>Կերպարվեստ - Նկարել մանկական օպերաների հերոսների կամ կատարի բեմական ձևավորումներ:</p> <p>Տեխնոլոգիա - Պատրաստել համապատասխան հագուստներ և պարագաներ:</p>		
<p>Կապը Հանրակրթության Պետական Չափորոշի վերջնարդյունքների հետ S1, S7, S8, S15, S22, S24, S27, S28, S30</p>		

<p>Թեմա 4</p>	<p>Հայ ազգային- ժողովրդական ծեսեր և նվագարաններ (10 ժամ) Ենթաթեմա 1. Երաժշտական և գրական խոսքը ժողովրդական ծեսերում</p>	
<p>Նպատակներ</p> <ol style="list-style-type: none"> 1) Ձևավորել պատկերացումներ հայ ժողովրդական ծեսերի մասին: 2) Ձևավորել և զարգացնել դրանց նպատակների, բովանդակության, կառուցվածքի և իրականացման վերաբերյալ գիտելիքներ: 3) Ձևավորել ծեսերի ընթացքում կատարվող երգերը, խմբերգերը, շուրջպարերը և խաղերը կատարելու կարողություններ: 4) Ձևավորել հայ ազգային նվագարանների և նվագախմբերի մասին պատկերացումներ և գիտելիքներ: 5) Ուսումնասիրել և խթանել հետաքրքրություն ժողովրդական ծեսերում խոսակցական և երաժշտական ինտոնացիաների վերաբերյալ: 6) Չարգացնել ծեսերը և ժողովրդական ավանդույթները բեմականացնելու կարողություն 7) Արժևորել ժողովրդական ավանդույթները: 	<p>Ուղղորդող հարցեր Ի՞նչ է նշանակում ժողովրդական ծես: Ձեր ընտանիքում կատարո՞ւմ եք որևէ ծես կամ ծիսական արարողություն:</p>	
<p>Վերջնարդյունքներ</p> <ol style="list-style-type: none"> 1) Ճանաչի և ներկայացնի ժողովրդական ծեսերը և ծիսական երաժշտությունը: 2) Ստեղծի կերպարներ ժողովրդական ծեսերից արտահայտիչ երգեցողության և դերասանական հնարների միջոցով: 3) Բեմականացնի ժողովրդական ծեսերի հատվածներ և ստեղծի հետաքրքրաշարժ երաժշտական կերպարներ: 4) Երգի (մեկնակ կամ խմբով) ժողովրդական տարբեր ծեսերի երգեր ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ: 5) Բացատրի ծեսերի բովանդակությունը, կառուցվածքը, ներկայացման ձևը, ցուցաբերի հուզական արձագանք: 6) Վերլուծի դրանք, մեկնաբանի խոսակցական և երաժշտական ինտոնացիաները, կատարի ծեսին համապատասխան պարեր և շուրջպարեր, մեկնաբանի դրանց իմաստը: 7) Տարբերի հնչողությամբ ազգային նվագարանները: 8) Նկարագրի ծիսական ավանդույթների փոփոխությունները մեր օրերում: 9) Արժևորի ժողովրդական ծեսերի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում, բացատրի, որ ինքը, ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը, դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: 		
<p>Թեմայի բովանդակությունը</p> <ol style="list-style-type: none"> 1) Հայ ժողովրդական ծեսեր: 2) Խոսակցական և երաժշտական ինտոնացիաները ժողովրդական ծեսերում: 	<p>Առաջարկվող գործունեության ձևեր</p> <ol style="list-style-type: none"> 1) Ուսումնասիրել ժողովրդական ծեսերը: 	<p>Խաչվող հասկացություններ Անհատներ և հարաբերություններ</p> <p>Հաղորդակցվելով ազգային արվեստի ավանդույթներին, ժողովրդական ծեսերին՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ արմատներ</p>

<p>3) Ժողովրդական ավանդույթներ, տոնախմբություններ:</p> <p>4) Հայ ազգային նվագարաններ և նվագախմբեր:</p>	<p>2) Նկարագրել ժողովրդական ավանդույթները և բացատրել դրանց նպատակը:</p> <p>3) Սովորել և կատարել տարբեր ծիսական երգեր, պարերգեր, շուրջպարեր և խաղեր:</p> <p>4) Նկարագրել դրանցից ստացած տպավորությունները և ներկայացնել գույներով կամ նկարելով:</p> <p>5) Բեմադրել ծեսերի հատվածներ:</p> <p>6) Ներկայացնել ծեսի ընթացքում օգտագործվող ազգային նվագարանները:</p> <p>7) Արժևորել ժողովրդական արվեստը:</p>	<p>ունի, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է ինքնարտահայտվել ազգային ծիսական երգերի միջոցով: Համընկնո՞ւմ են իր և իր ընտանիքի, ընկերների պատկերացումները երաժշտության մասին, ինչպե՞ս կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով, ի՞նչ դեր ունի այն իր կյանքում: Կարևորը՝ հասկանա, որ ազգային երաժշտությունն իր կյանքի անբաժանելի մասն է:</p> <p>Անհատական և մշակութային արժեհամակարգ</p> <p>Մասնակցելով ծիսական արարողությունների բեմադրմանը՝ սովորողը դրսևորում է ստեղծագործական հմտություններ, ներկայացնում է ազգային ավանդույթները ուրույն մեկնաբանությամբ, դերասանական հնարներով, ազգային պարերով, խաղերով և այլն:</p>
<p>Միջառարկայական (միջբնագավառային) կապեր</p> <p>Մայրենի – ներկայացնել հայ ժողովրդական ավանդույթները, ծեսերը:</p> <p>Կերպարվեստ – ստեղծել և ձևավորել ծիսական պարագաներ:</p> <p>Ես և շրջակա միջավայրը - ներկայացնել բնության զարթոնքի և ժողովրդական ծեսի կապը:</p> <p>Տեխնոլոգիա - պատրաստել ծիսական հագուստներ և պարագաներ:</p>		
<p>Կապը Հանրակրթության Պետական Չափորոշի վերջնարդյունքների հետ S1, S10, S16, S17, S19, S22, S24, S27, S28, S30</p>		

6-րդ դասարան

Թեմա 1		Համալիր (սինթետիկ) արվեստներ Օպերետ, Մյուզիքլ
Նպատակներ 1) Ձևավորել և զարգացնել համալիր (սինթետիկ) արվեստների մասին գիտելիքներ: 2) Չարգացնել դրանք ճանաչելու, վերլուծելու, մեկնաբանելու հմտություններ: 3) Ձևավորել և զարգացնել մյուզիքլ և օպերետ ժանրերը ուսումնասիրելու հմտություն: 4) Ձևավորել և զարգացնել համալիր (սինթետիկ) արվեստների նկատմամբ հատուկ վերաբերմունք՝ հետաքրքրասիրություն և սեր: 5) Ձևավորել և զարգացնել համերգասրահներ ու թատրոններ այցելելու պահանջ և մշակույթ:		Ուղղորդող հարցեր Լսել են մյուզիքլի կամ օպերետի մասին: Ե՞րբ են ստեղծվել և զարգացել: Ի՞նչ տարածում ունեն մեր ժամանակներում: Ծանո՞թ են Երևանի թատրոնների ազդագրերին, կա՞ն այս ժանրերը դրանց մեջ:
Վերջնարդյունքներ 1) Դրսևորի երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ երաժշտական կերպարը ճիշտ և արտահայտիչ ներկայացնելու համար: 2) Երգի (մենակ կամ խմբով) արիաներ և խմբերգեր մյուզիքլից և օպերետներից, մաքուր ինտոնացիայով (նաև երկծայն), հստակ ռիթմով, նրբերանգներով, 3) Մեկնաբանի ունկնդրվող ստեղծագործության երաժշտական կերպարը՝ որպես մարդկային զգացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն: 4) Վերլուծի և մեկնաբանի արիայի, խմբերգի հիմնական գաղափարը: Ցուցաբերի հուզական արձագանք և ապրումակցում: 5) Ինքնուրույն կամ խմբով ստեղծի փոքրիկ տեսակյուբ մյուզիքլի կամ օպերետի կոմպոզիտորի կամ ստեղծման պատմության մասին: 6) Արժևորի ազգային և համաշխարհային արվեստը և ներկայացնի տարբեր միջավայրերում: 7) Հաճախակի այցելի համերգասրահներ, թատրոններ:		
Թեմայի բովանդակությունը	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
1) Մյուզիքլ և օպերետ ժանրերը՝ որպես սինթետիկ արվեստի ամենամատչելի ձևեր: 2) Դրանց բնույթն ու կառուցվածքը: 3) Դրանց կերպարները և զարգացումը: 4) Դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները: 5) Դրանց դերն ու նշանակությունը տարբեր դարաշրջաններում:	1) Ունկնդրել կամ դիտել նշված ժանրերի ստեղծագործությունների տեսագրությունը: 2) Ուսումնասիրել լիբրետոտները: 3) Վերլուծել և մեկնաբանել երաժշտության համապատասխանությունը գրական տեսքստին: 4) Կատարել հատվածներ տվյալ ստեղծագործություններից արտահայտիչ,	Ժամանակ և տարածություն Սովորողները երաժշտական մեծ կտավի ստեղծագործություններն ուսումնասիրելիս բացահայտում են հերոսների ապրած ժամանակաշրջանը, նրանց կենցաղը, մարդկության պատմության շրջադարձային կետերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթությունների հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: Անհատական և մշակութային արժեհամակարգ

	<p>երաժշտական և դերասանական հմտություններով:</p> <p>5) Բեմադրել տվյալ ստեղծագործությունների հատվածներ:</p> <p>6) Փորձել ստեղծել փոքրիկ մյուզիքլ սեփական սցենարով:</p> <p>7) Այցելել համերգասրահներ և թատրոններ:</p>	<p>Պետք է երաժշտությունը ուսումնասիրել մեկ ամբողջության մեջ այն ամենի հետ, ինչը նրան ծնում և շրջապատում է. կյանքի, բնության, սովորությունների, բանաստեղծությունների, հեքիաթի, հավատքի, հուշարձանների, ամրոցների, գեղանկարների և շատ-շատ ուրիշ բաների հետ: Երաժշտությանը հաղորդակցվելով՝ սովորողն իր տպավորությունները, զգացողությունները պատկերում է բանավոր ելույթով, կերպարվեստի գործով կամ էլեկրոնային ուսումնական նյութ ստեղծելով, արժևորելով ստեղծարարությունը և ներդաշնակությունը:</p>
<p>Միջառարկայական (միջբնագավառային) կապեր</p> <p>Գրականություն - Վերլուծել ուսումնասիրվող երաժշտական ստեղծագործության գրական հիմքը՝ լիբրետտոն, ստեղծման ժամանակաշրջանը, ոճը, արտահայտչականությունը և այլն:</p> <p>Կերպարվեստ - Վերլուծել մյուզիքլի, օպերետի բեմի ձևավորման, դեկորների ընտրության, հագուստների ձևավորման համապատասխանությունը ստեղծագործության բովանդակությանը:</p> <p>Պարարվեստ - Ուսումնասիրվող երաժշտական ստեղծագործությանը համապատասխան ստեղծել և կատարել պարային շարժումներ:</p> <p>Հայրենագիտություն- բեմադրել տվյալ ստեղծագործության բովանդակությանը համապատասխան ծիսական տոնակատարություններ:</p> <p>Տեխնոլոգիա – պատրաստել բեմական հագուստներ և պարագաներ:</p>		
<p>Կապը Հանրակրթության պետական չափորոշի վերջնարդյունքների հետ: Յ2, Յ26 , Յ28, Յ30, Յ31, Յ32, Յ34, Յ42, Յ43, Յ44, Յ45</p>		

<p>Թեմա 2</p>	<p>Օպերա, բալետ (դասական, ազգային, ժամանակակից.)</p>
<p>Նպատակներ</p> <p>1) Չարգացնել ազգային և համաշխարհային օպերային և բալետային արվեստների վերաբերյալ գիտելիքներ:</p> <p>2) Չարգացնել դրանցից հատվածներ կատարելու, վերլուծելու, մեկնաբանելու, բեմադրելու հմտություններ:</p>	<p>Ուղղորդող հարցեր</p> <p>Ի՞նչ արվեստների միասնությունից են ստեղծվում այդ ժանրերը, Ինչու՞ են դժվարարամատչելի հասարակության լայն խավերի համար</p>

<p>3) Չարգացնել հմտություններ դրանց ունկնդրումից կամ դիտումից ստացած տպավորությունները մեկնաբանելու համար:</p> <p>4) Ձևավորել այդ ժանրերի նկատմամբ հատուկ վերաբերմունք՝ հետաքրքրասիրության դրսևորում, համերգասրահներ, թատրոններ այցելելու պահանջ և մշակույթ:</p>	<p>Այցելել ես որևէ երաժշտական թատրոն:</p>	
<p>Վերջնարդյունքներ</p> <p>1) Երգի (մենակ կամ խմբով) հատվածներ օպերաներից՝ խմբերգեր, արիաներ մաքուր ինտոնացիայով (նաև երկձայն), հստակ ռիթմով, նրբերանգներով, զարգացնելով մեղեդային գիծը, հետևելով նվագակցությանը և խմբավարի շարժումներին:</p> <p>2) Ստեղծի հետազոտական կյուբ որևէ օպերայի, բալետի, դրանց հեղինակների կամ ազգային, համաշխարհային հանրահայտ կատարողների մասին՝ կիրառելով նոր տեխնոլոգիաներ:</p> <p>3) Վերլուծի և մեկնաբանի օպերայի կամ բալետի հիմնական գաղափարը: Ցուցաբերի հուզական արձագանք, որոշի, թե որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը:</p> <p>4) Մեկնաբանի ունկնդրվող ստեղծագործության երաժշտական կերպարը՝ որպես մարդկային զացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն:</p> <p>5) Ներկայացնի նոր տեխնոլոգիաների դերը օպերային ներկայացումներն ավելի տպավորիչ դարձնելու գործընթացում, արժևորի դրանց միջոցով ստեղծված երաժշտական կերպարի ներգործության ուժը մարդու զացմունքների և գիտակցության վրա:</p> <p>6) Մեկնաբանի մարդկության զարգացման փուլերի ազդեցությունը նոր ժանրերի (օրինակ՝ ռոք-օպերա, օպերա-բալետ) առաջացման վրա:</p> <p>7) Ազգային երաժշտության իմացությունն օգտագործի իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:</p>		
<p>Թեմայի բովանդակությունը</p> <p>1) Մանկական, դասական, ազգային և ժամանակակից օպերային և բալետային երաժշտություն:</p> <p>2) Դրանց բնույթն ու կառուցվածքը:</p> <p>3) Երաժշտական կերպարների զարգացումը:</p> <p>4) Նախերգանք- ֆինալ:</p> <p>5) Այդ ժանրերի զարգացումը XX-XXI դարերում:</p>	<p>1) Առաջարկվող գործունեության ձևեր</p> <p>2) Ուսումնասիրել ազգային և համաշխարհային օպերային և բալետային երաժշտության նմուշները:</p> <p>3) Ունկնդրել կամ դիտել ստեղծագործության տեսագրությունը:</p> <p>4) Ուսումնասիրել լիբրետտոն:</p> <p>5) Վերլուծել և մեկնաբանել երաժշտության համապատասխանությունը գրական տեքստին:</p> <p>6) Կատարել հատվածներ տվյալ ստեղծագործություններից:</p> <p>7) Բեմադրել մանկական կամ ազգային որևէ օպերայի հատվածներ:</p> <p>8) Ներկայացնել հետազոտական կամ նախագծային աշխատանքներ</p>	<p>Խաչվող հասկացություններ ժամանակ և տարածություն</p> <p>Սովորողները երաժշտական մեծ կտավի ստեղծագործություններն ուսումնասիրելիս բացահայտում են հերոսների ապրած ժամանակաշրջանը, նրանց կենցաղը, մարդկության պատմության շրջադարձային փուլերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:</p> <p>Անհատական և մշակութային արժեհամակարգ</p> <p>Սովորողը, ուսումնասիրելով օպերային և բալետային արվեստը, ներկայացնում է հետազոտական կամ նախագծային աշխատանքներ</p>

	<p>«Օպերային և բալետային արվեստը աշխարհում և Հայաստանում» կամ «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն» թեմայով:</p> <p>9) Այցելել օպերային թատրոն:</p>	<p>իր տպավորությունների, զգացողությունների մասին, կատարում է ինքնուրույն եզրահանգումներ: Կազմակերպում է քննարկումներ, բանավեճեր: Այս գաղափարի ուսումնասիրության ընթացքում սովորողները փորձում են պատասխանել այն հարցին, թե ի՞նչ է ստեղծարարությունը, որն է դրա դերը, նպատակը կամ ի՞նչ հիմնախնդիրների լուծումներ է առաջարկում ամեն մարդու կյանքում:</p> <p>Սովորողն արժևորում է մշակույթի բարձրակարգ ստեղծագործությունները, հասկանում է դրանց գեղագիտական և բարոյական արժեքը, սովորում է դրանցով զարդարել և հարստացնել իր կյանքը:</p>
--	--	--

<p>Միջառարկայական (միջբնագավառային) կապեր</p> <p>Գրականություն - Վերլուծել ուսումնասիրվող երաժշտական ստեղծագործության գրական հիմքը՝ լիբրետտոն, ստեղծման ժամանակաշրջանը, ոճը, արտահայտչականությունը: Ներկայացնել արվեստների սկզբնաղբյուրների, նպատակների ընդհանրությունը և արտահայտչամիջոցների առանձնահատկությունները:</p> <p>Կերպարվեստ - Վերլուծել օպերայի, բալետի բեմի ձևավորման, դեկորների ընտրության, հագուստների ձևավորման համապատասխանությունը ստեղծագործության բովանդակությանը:</p> <p>Պարարվեստ - Ուսումնասիրվող երաժշտական ստեղծագործությանը համապատասխան պարերի շարժումներ ստեղծել և կատարել:</p> <p>Հայրենագիտություն - Տվյալ ստեղծագործության բովանդակությանը համապատասխան բեմադրել ծիսական տոնակատարություններ:</p> <p>Տեխնոլոգիա - Բեմական հագուստներ և պարագաներ պատրաստել:</p>	
<p>Կապը Հանրակրթության պետական չափորոշի վերջնարդյունքների հետ: Հ2, Հ26 , Հ28, Հ30, Հ31, Հ32, Հ34, Հ42, Հ43, Հ44, Հ45</p>	

<p>Թեմա 3</p>	<p>Համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողներ՝ դիրիժորներ, երգիչներ, երաժիշտներ</p>
<p>Նպատակներ</p> <ol style="list-style-type: none"> 1) Ձևավորել և զարգացնել ազգային և համաշխարհային հանրահայտ երաժիշտ կատարողների մասին գիտելիքներ: 2) Չարգացնել նրանց ստեղծագործական գործունեությունը ուսումնասիրելու հմտություններ: 	<p>Ուղղորդող հարցեր</p> <p>Ի՞նչ գիտեք համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողների՝ դիրիժորների, երգիչների, պարողների, երաժիշտների մասին: Ունե՞ք արդյոք նախընտրած որևէ կատարող: Ի՞նչո՞ւ եք նրան նախընտրում:</p>

3) Արժևորել նրանց տաղանդը, անցած ուղին և համաշխարհային արվեստի զարգացման գործընթացում ունեցած ավանդը:		
Վերջնարդյունքներ		
1) Դրսևորի հատուկ վերաբերմունք համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողների նկատմամբ և արժևորի բոլոր ժանրերի և երգչային ձայների, դիրիժորների, երաժիշտների, պարողների բարձրորակ կատարումները:		
2) Ինքնուրույն կամ խմբով ստեղծի փոքրիկ տեսանյութ տարբեր ժանրերի հանրահայտ կատարողների և նրանց կատարումներից ստացած տպավորությունների մասին, եզրահանգումներ անի:		
3) Ազգային երաժշտության կատարողական արվեստի հանրահայտ անունների իմացությունն օգտագործի իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:		
Թեմայի բովանդակություն	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
1) Համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողներ՝ դիրիժորներ, երգիչներ, երաժիշտներ, պարողներ: 2) Նրանց կյանքը և ստեղծագործական գործունեությունը: 3) Նրանց տեղը համաշխարհային արվեստում:	1) Ուսումնասիրել հանրահայտ կատարողների ստեղծագործական գործունեությունը: 2) Ունկնդրել և դիտել նրանց կատարումները: 3) Վերլուծել և գնահատել նրանց ավանդը համաշխարհային արվեստի զարգացման գործում: 4) Ստեղծել հետազոտական աշխատանք կամ նախագիծ նրանց ստեղծագործական գործունեության մասին:	Ժամանակ և տարածություն Սովորողները, ծանոթանալով համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողների ստեղծագործական գործունեությանը, բացահայտում են նրանց ապրած ժամանակաշրջանը, կենցաղը, արժևորում հասարակական գործունեությունը:
Միջառարկայակն կապեր		
Գրականություն - Ներկայացնել գրականության ասպարեզում հայտնի ասմունքողների, գրականագետների արվեստը:		
Թատրոն - Ներկայացնել թատերական գործիչների, դերասանների արվեստը:		
Պարարվեստ - Ներկայացնել հանրահայտ պարողների, պարուսույցների, բեմադրիչների արվեստը:		
Մշակույթ - Ներկայացնել հանրահայտ մշակութային գործիչներին, արվեստագետներին և արժևորի նրանց ավանդը:		
Կապը Հանրակրթության պետական չափորոշի վերջնարդյունքների հետ: Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ34, Հ42, Հ43, Հ44, Հ45		

Թեմա 4	Նվագարանային ժանրեր՝ սոնատ, կոնցերտ, սիմֆոնիկ պատկերներ, սիմֆոնիա (8 ժամ):
Նպատակներ	Ուղղորդող հարցեր

<ol style="list-style-type: none"> 1) Ձևավորել և զարգացնել նվազարանային ժանրերի՝ սոնատի, կոնցերտի, սիմֆոնիկ պատկերների, սիմֆոնիայի մասին պատկերացումներ: 2) Ձևավորել նշված ժանրերի բնույթի, բովանդակության, կառուցվածքի և ձևի մասին գիտելիքներ: 3) Ձևավորել դրանց ունկնդրումից ստացած տպավորությունները վերլուծելու և մեկնաբանելու հմտություններ: 4) Ձևավորել կենդանի կատարումների և համերգասրահներ, թատրոններ այցելելու նկատմամբ հետաքրքրություն և պահանջ: 5) Արժևորել ազգային և համաշխարհային համբավ ունեցող երաժիշտ կատարողների արվեստը: 	<p>Ի՞նչ ժանրեր կան, որոնք կատարում են միայն նվազարանները և նվազախմբերը: Ո՞ր ժանրն է քեզ առավել հետաքրքրում: Ո՞ր հայ կոմպոզիտորն է ստեղծել առաջին սոնատը, կոնցերտը, սիմֆոնիան, Ներկա եղե՞լ ես որևէ ժանրի համերգային կատարմանը:</p>	
<p>Վերջնարդյունքներ</p> <ol style="list-style-type: none"> 1) Ինքնուրույն կամ խմբով ստեղծի փոքրիկ տեսանյութ կամ սահիկաշար տվյալ ժանրերի ստեղծագործություններից ստացած տպավորությունների մասին կամ հանդես գա բանավոր ելույթով, եզրահանգումներ անի: 2) Մեկնաբանի ունկնդրվող ստեղծագործության երաժշտական կերպարը՝ որպես մարդկային զացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն: 3) Վերլուծի և մեկնաբանի նվազարանային ժանրերի կառուցվածքը: Ներկայացնի նվազարանները և նվազախմբերը, ցուցաբերի հուզական արձագանք: 4) Վերլուծի երաժշտական նյութը, որոշի, թե որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը մարմնավորել իր մտահղացումը: 5) Արժևորի այդ ժանրերի միջոցով ստեղծված երաժշտական կերպարի ներգործության ուժը մարդու զացմունքների և գիտակցության վրա: 6) Արժևորի այդ ժանրերի ազգային և համաշխարհային լավագույն նմուշները: 		
<p>Թեմայի բովանդակությունը</p>	<p>Առաջարկվող գործունեության ձևեր</p>	<p>Խաչվող հասկացություններ</p>
<ol style="list-style-type: none"> 1) Նվազարանային ժանրեր՝ սոնատ, կոնցերտ, սիմֆոնիկ պատկերներ, սիմֆոնիա և այլն: 2) Դրանց կառուցվածքը, մասերը: 3) Դրանցում առկա երաժշտական կերպարների զարգացումը: 4) Դրանք կատարող նվազարանները և նվազախմբերը: 	<ol style="list-style-type: none"> 1) Սոնատի, կոնցերտի, սիմֆոնիկ պատկերների, սիմֆոնիայի ունկնդրում ձայնագրության կամ տեսաերկի միջոցով: 2) Զննարկում, մեկնաբանում: 3) Նշված ժանրերում առկա մեկ կամ մի քանի կերպարների վերլուծություն և մեկնաբանում: 4) Դրանք կատարող նվազարանների և նվազախմբերի ներկայացում: 	<p>Օրինաչափություններ Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտման շնորհիվ: Երաժշտական ժանրերը դասակարգվում են ընդհանուր հատկանիշների կամ նմանատիպ կառուցվածքների հիման վրա: Դասակարգումը թույլ է տալիս բազմատեսակ ստեղծագործությունները համակարգել սահմանափակ թվով խմբերում:</p>

	<p>5) Զննարկումներ երաժշտության և արվեստի մյուս ճյուղերի բազմա ստեղծագործությունների մասին:</p>	<p>Կառուցվածք և գործառույթ Կառուցվածքը Էական դեր ունի որևէ ստեղծագործության գաղափարի ուսումնասիրման և բացահայտման հարցում, երբ պարզվում է, թե ինչու է հեղինակը կառուցել իր երկը հենց այդ կառուցվածքով, ինչ նպատակ է հետապնդել, մասերից յուրաքանչյուրն ինչ դեր ունի մտքերը, հույզերը, զգացումները արտահայտելու գործում:</p>
<p>Միջառարկայական (միջբնագավառային) կապեր Գրականություն - Բազմամաս գրական ստեղծագործությունները համեմատել երաժշտական մեծ կտավի ստեղծագործությունների հետ, գրագետ կապակցված խոսքով ներկայացնել ընդհանրությունները և առանձնահատկությունները: Կերպարվեստ - Ներկայացնել երաժշտական մեծ կտավի ստեղծագործությունների բնույթին համապատասխան բազմամաս կերպարվեստային ստեղծագործություն:</p>		
<p>Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ: Յ2, Յ26 , Յ28, Յ30, Յ31, Յ32, Յ34, Յ42, Յ43, Յ44, Յ45</p>		

8-րդ դասարան

Թեմա 1.

Ժամանակակից երաժշտատեսակներն աշխարհում և Հայաստանում՝ ջազ, ռոք, , փոփ, բլյուզ, հիփ հոփ,ռեպ...

Նպատակներ

- 1) Ձևավորել և զարգացնել ժամանակակից երաժշտատեսակների մասին պատկերացումներ և գիտելիքներ:
- 2) Ձևավորել և զարգացնել Հայաստանում առկա ժամանակակից երաժշտատեսակների հայտնի կատարողների արվեստի մասին գիտելիքներ:
- 3) Ձևավորել և զարգացնել սեփական երաժշտական ճաշակը ներկայացնելու և հիմնավորելու հմտություններ:
- 4) Ձևավորել և զարգացնել նախընտրած կոմպոզիտորի կամ կատարողի մասին հետազոտական կամ նախագծային աշխատանք կատարելու հմտություններ:
- 5) Արժևորել ժամանակակից երաժշտական արվեստը:

Ուղղորդող հարցեր

Ի՞նչ է նշանակում ժամանակակից արվեստ: Ժամանակակից ի՞նչ երաժշտատեսակներ գիտես: Դրանցից ո՞րն ես նախընտրում և ինչու: Հաճախ՞ում ես համերգասրահներ նշված ոճերի համերգներ ունկնդրելու համար:

Վերջնարդյունքներ

- 1) **Ճանաչի ժամանակակից** երաժշտատեսակները և **թվարկի** այդ ոճերի հանրահայտ երաժիշտ կատարողների անունները:
- 2) **Կատարի այդ** ոճով ստեղծագործող հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները:
- 3) Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը **Ներկայացնի** բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհանդեսների միջոցով: Ներկայացման ընթացքում **օգտագործի** խոր տեխնոլոգիաների հնարավորությունները:
- 4) **Վերլուծի** երաժշտական ստեղծագործությունը, արտահայտի սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ, ակտիվորեն ներգրավվի քննարկումների, բանավեճերի մեջ, հարգի ուրիշների կարծիքը, հիմնավորի սեփական կարծիքը:
- 5) Ուսումնասիրի XX-XXI դարերի երաժշտական ուղղությունները և **Ներկայացնի** որևէ կոմպոզիտորի, կատարողի կամ համույթի ստեղծագործական գործունեությունը հետազոտական կամ նախագծային աշխատանքով:
- 6) **Արժևորի** ժամանակակից երաժշտությունը՝ որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլման միջոց:

Թեմայի բովանդակությունը

- 1) Ժամանակակից երաժշտական ուղղությունները. Ջազ. առաջացումը և զարգացումը աշխարհում և Հայաստանում.
- 2) Ռոք, փոփ, բլյուզ, հիփ հոփ և այլ ուղղությունները, դրանց տեսակները աշխարհում և Հայաստանում:

Առաջարկվող գործունեության ձևեր

- 1) Ուսումնասիրել, ունկնդրել, կատարել, մեկնաբանել ժամանակակից երաժշտական ուղղությունները աշխարհում և Հայաստանում:
- 2) Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, ստեղծել պաստառներ, շնորհանդեսներ, նախագծային աշխատանքներ և այլն:

Խաչվող հասկացություններ

Անհատներ և հարաբերություններ
Սովորողը, ուսումնասիրելով XX-XXI դարերի երաժշտական ուղղությունները, ներկայացնում է հետազոտական կամ նախագծային աշխատանքներ իր տպավորությունների, զգացողությունների, երաժշտական ճաշակի մասին, անում է ինքնուրույն եզրահանգումներ: Կազմակերպում է քննարկումներ, բանավեճեր, ստեղծում է պաստառներ, շնորհանդեսներ և այլն: Այս թեմայի ուսումնասիրության ընթացքում սովորողները

